ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 1915Թ. ՀՈՒԼԻՍՅԱՆ ԳԱՂԹԸ

Ա.Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռուս-Թուրքական և ռուս-պարսկական պատերազմները հարուստ են անակնկալ ռազմական ծրագրերով, դիվանագիտական-քաղաքական նպատակների բազմաբնույթ կերպարանափոխություններով, հայերի տեղահանություններով, ջարդերով ու գաղթերով: Սակայն հայ ժողովրդի նոր ժամանակաշրջանի, մասնավորապես արևմտահայ մեծ ու արյունոտ, ողբերգական պատմության մեջ ուրույն էջ է Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915թ. հուլիսյան գաղթը: Նկարագրել գաղթն ամբողջապես՝ իր բոլոր մանրամասնություններով ու արհավիրքներով, անկարելի է: Այն մեծ է ծավալով, բովանդակությամբ, սարսափներով ու հետևանքներով:

1915թ. սկզբներին Կովկասյան ճակատի ռազմական գործողություններն արդեն ընթանում էին Արևմտյան Հայաստանի տարածքում: Կովկասյան բանակի 4-րդ կորպուսի զորամասերը, որոնք գործում էին Երևանի ուղղությամբ և դեռևս պատերազմի սկզբներին մտել էին Բայազետի ու Ալաշկերտի հովիտներ՝ նպատակ հետապնդելով ապահովելու ռուսական զորամիավորումների ձախ թևը, Սարիղամիշի մոտ ռուսական բանակի հարձակման հետևանքով թուրքական զորքերի կրած ջախջախումից հետո ավելի աշխուժացրին իրենց հարձակողական գործողությունները: Նրանց հարվածների տակ թուրքական զորքերը խուճապահար նահանջեցին դեպի Մուշ և Բիթլիս: Հետապնդելով նահանջող թշնամուն՝ ռուսական բանակը 1915թ. փետրվար-մայիսին գրավեց Մանազկերտը, Բաշկալեն, Շատախը, Կոթուրը, Արճեշը և Վանը: Սակայն շուտով, ռազմական իրավիճակի կտրուկ փոփոխման հետևանքով, նոր ուժեր կենտրոնացնելով Աբդուլ Քերիմ փաշայի հրամանատարության ներքո, թուրքական զինվորական ղեկավարությունը հակահարձակման կարգադրություն արեց ռուսական 4-րդ կորպուսի զորամասերի դեմ Խնուսի ուղղությամբ: Թուրքական զորքերի թվական գերազանցության պատճառով (ռուսական բանակի հետախույզները չափազանցված տեղեկություններ էին ստացել թուրքական ուժերի մասին՝ շուրջ 70.000 զինվոր. իրականում թուրքական բանակի թիվը չէր անցնում 30.000-ից)[1], Կովկասյան բանակի 4-րդ կորպուսը ստիպված նահանջեց դեպի Ալաշկերտի հովիտ, որի հետևանքով սկսեց գաղթել նաև հարակից շրջանների հայ ազգաբնակչությունը: «Գաղթում էին Թափարիզից, Մանազկերտից, Պատնոսից»,-հայտնում էր Տ.Դերոյանը Բաքվի Հայոց բարեգործական

---

[1] *Կ.Սասունի, Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ 1914 - 1918 (Տաճկահայ գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի Հանրապետության կազմության մեջ, Բոստոն, 1927, էջ 80 - 81), Լ.Զորմիսյան, Համապատկեր արևմտահայ մեկ դարու պատմության, Գ հատոր (1908 - 1922), Պեյրութ, 1975, էջ 264, Ե.Ղ.Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Ե., 1964, էջ 215 - 216:*

ընկերությանն ուղղված՝ 1915թ. հուլիսի 14-ի հեռագրում[2]: «Պատմական իրողությունն այն է, - գրում է սպյուռքահայ պատմաբան Գ.Լազյանը, - որ ռուսական բանակը, առանց ենթակա լինելու թուրքական մեծ հարձակողականին, նահանջեց Տարոնի ճակատից, որ 200 հազ.-ի մոտ հայեր լքվեցին թշնամու ձեռքը և ահավոր եղեռնի զոհեր եղան»[3]:

Վան-Վասպուրականի ազգաբնակչության գաղթի լուրը Վան հասավ 1915թ. հուլիսի 13-ին: Զնայած Վանում գտնվող ռուսական բանակի հրամանատար, գեներալ Նիկոլաևը Վանի նահանգապետ Արամ Մանուկյանին[4] հայտնել էր, որ «իրենց հրաման կա մնալ ու թշնամու ճնշման տակ նահանջել»[5], սակայն այդ դեպքից անմիջապես հետո աշխատանքը Վանում սկսեց թուլանալ, իսկ մարդիկ խմբերով լցվեցին փողոց: Ինչպես Արամ Մանուկյանն էր նշում, «երբեք խոսք չբացվեց նահանջի մասին Մանազկերտում, այնպես որ մինչև վերջ մենք մնացինք խավարի մեջ, չիմանալով, թե թուրքերը հարձակումը ո՞ր գնդի վրա են ուղղել. ենթադրում էինք, որ դեկտեմբերի դեպքը կրկնությունն է, որովհետև ճիշտ այդ ժամանակ Կովկասից եկողները պատմում էին, որ ժողովրդին հայտնել են, որ Կարսից հեռանան»[6]: Ականատեսների վկայությամբ, «իրարանցում, չփոթ ամենևին չկար, մարդիկ միայն լուր էին ուզում, հաստատ լուր և գալիք վտանգի հետ շատ արագ ու հեշտ էին հաշտվում»[7]:

Հուլիսի 14-ին Վանի Երամյան վարժարանում հրավիրվեց մի ժողով, որին մասնակցում էին Ապրիլյան հերոսամարտի 1000-ից ավելի մասնակիցներ: Ժողովականներին տեղեկացվեց, որ ռուսական բանակի նահանջի հետևանքով Շատախի և Մոկսի կորուստը կարող է անցանկալի հետևանքներ ունենալ նաև Վանի համար: Այդ նպատակով, համընդհանուր համաձայնության գալուց հետո, ժողովի որոշման համաձայն, կազմվեցին զինված խմբեր (ընդամենը 100 հոգուց բաղկացած, որովհետև դժվար էր նրանց զինել), որոնք օգնության շտապեցին Մոկսին և Շատախին: Սակայն ճանապարհին հանդիպելով նահանջող մոկսեցիներին և շատախցիներին՝ խմբերը ձեռնունայն վերադարձան Վան[8]:

Այս ծանր ու խառնաշփոթ իրավիճակում որոշվեց ծերերին ու երեխաներին ժամանակավորապես հանել քաղաքից, իսկ 17 - 45 տարեկան տղամարդկանց զենքի կոչել և երկիրը պաշտպանել անխուսափելի վտանգից: Այդ էր նահանգապետ Արամ Մանուկյանի ցանկությունը, որը նույն օրը գեներալ Նիկոլաևին ներկայացրած գրավոր զեկուցագրում նշում էր. «Մեզ անհայտ ռազմագիտական պատճառով լսում ենք, որ ռուս զորքը պիտի նահանջի. մենք, որոշած լինելով մնալ, խնդրում ենք. 1. մեզ թողնել բավական ռազմամթերք, 2. մեզ թողնել այն զենքը, որ դուք հնարավորություն չպիտի ունենաք տեղափոխելու, 3. ձեր մթերանոցները, որոնք փոխադրելու հնարավորություն չունենաք, չփչացնեք,

---

[2] ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 76:

[3] Գ.Լազյան, Հայաստան և հայ դատ (հայ և ռուս հարաբերությունների լույսի տակ), Գահիրե, 1957, էջ 182:

[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 242, ց. 1, գ. 19, թ. 44:

[5] ՀՀ Հասարակական և քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՓԿՊԱ), ֆ. 4033, ց. 5, գ. 280, թ. 6:

[6] Նույն տեղում, թ. 4:

[7] Հովիտ, 16.VIII. 1915:

[8] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 280, թ. 3:

այլ մեզ թողնեք, 4. մեզ թողնեք անթել հեռագրի կայանը՝ գործիքներով և պաշտոնյաներով, 5. մեզ թողնեք մի քանի թնդանոթներ՝ գերվարժ զինվոր մասնագետներով»[9]:

Գեներալ Նիկոլաևը պնդում էր, որ բոլորովին էլ հարկ չկար նման պատրաստություն տեսնելու, քանի որ ռուսական բանակը երբեք Վանից չի նահանջի: Սակայն, միևնույն ժամանակ, նա ավելացնում էր, որ զգուշության համար վատ չէր լինի, եթե կռվողները մնային, իսկ կանայք ու երեխաները գաղթեին Կովկաս[10]:

Գաղթի վերաբերյալ ավելի հավաստի տեղեկություններ ստանալու նպատակով նահանգապետ Արամ Մանուկյանը հուլիսի 17-ին հեռագիր է ուղարկում գեներալ Յուդենիչին՝ հետևյալ բովանդակությամբ. «Կլսենք, որ ռուս զորքը մեզ անհայտ պատճառներով, պիտի նահանջի ետ, որպեսզի կարողանանք ժամանակին որոշել մեր շրջանի հայ ազգաբնակչության վիճակը և մեր բռնելիք դիրքը, կխնդրենք փութ.ով հաղորդել մեզ այդ մասին Ձեր հրամանը...»[11]:

Նույն օրը, ուրբաթ երեկոյան, Վանի առաջնորդարանում, նահանգապետի նախագահությամբ, տեղի է ունենում 18 վանեցիների ժողով, որին մասնակցում էին նաև կամավորական գնդերի հրամանատարներ Վարդան Մեհրաբյանը և Գարեգին Փաստրմաճյանը: Նահանգապետ Արամը, ժողովականներին իրազեկ դարձնելով Կովկասյան ճակատում ռուսական զինվորական հրամանատարության կողմից Վան-Վասպուրականի բնակչությանը գաղթեցնելու իրեն արված ազդարարությանը, դիմում է նրանց՝ վերջիններիս կարծիքներն իմանալու ցանկությամբ[12]:

Սակայն նախքան ժողովի և իրադարձությունների հետագա ընթացքի վերլուծությանն անցնելը, փորձենք պարզաբանել երկու հարց. այն է՝ ա) Արամ Մանուկյանին և նրա կառավարության մյուս անդամներին նախօրոք (մինչև հուլիսի 17-ը) տեղեկացրե՞լ էին սպասվելիք նահանջի մասին թե՞ ոչ, բ) եթե իրոք, տեղեկացրել էին, ապա ինչո՞ւ նահանգապետ Արամ Մանուկյանն անմիջապես, մինչև ժողովի հրավիրումը և անցկացումը, նախապատրաստական և նախազգուշական նախնական ձեռնարկումներ չէր իրականացրել վան-վասպուրականցիների գաղթին կազմակերպված բնույթ տալու ուղղությամբ: Ժամանակակիցներից ոմանք պնդում են, որ փախուստից 8 - 10 օր առաջ նահանգապետ Արամին նախապես լուր է հասցվել հավանական գաղթի մասին[13]: Իսկ ոմանք էլ գանում են, որ այդպիսի լուր նահանգապետին չէր հասել ընդհուպ մինչև հուլիսի 13-ը[14]: Սակայն, անկախ այն հանգամանքից, թե Արամին տեղյակ էր պահվել հավանական գաղթի մասին թե ոչ, ակնհայտ էր, որ փախուստից մի քանի օր առաջ բացահայտ տվյալներ կային նահանջի ստույգ հավանականության մասին: Ռուսական բանակի նահանջի լուրը Վան հասավ հուլիսի 13-ի գիշերը: Հավանաբար այդ էր պատճառը, որ գաղթից մի քանի օր առաջ Կովկասյան ճակատի հրամանատարության թելադրանքով Վանից հեռացավ ֆրանսիական

[9] Նույն տեղում, թ. 6:

[10] Նույն տեղում, թ. 7:

[11] Նույն տեղում:

[12] Հուշեր Արմենակ Եկարյանի, Գահիրե, 1947, էջ 245, Վան-Տոսպ, 20. XII. 1915, Русское слово, 24.X. 1915:

[13] Վան -Տոսպ, 20.XII. 1915:

[14] Նույն տեղում:

հյուպատոսի ընտանիքը: Վանից մեկնելու առաջարկություն արվեց նաև Վանի ամերիկյան միսիոներներին, որոնք, սակայն, իրենց մի քանի անդամների ծանր հիվանդության բերումով հնարավորություն չունեցան անմիջապես մեկնելու: Գաղթից մի շաբաթ առաջ Վանից տեղափոխվեցին նաև Հիսուսյանների ֆրանսիացի միսիոներները: Իսկ գաղթից մի քանի օր առաջ ռուսական բանակի զորապետի հրամանով սկսեցին գաղթել Ալջևազի ու Արճեշի հայերը, որի մասին կամավորական առաջին գնդի հրամանատար Անդրանիկը իսկույն տեղեկացրեց Արամին: Վերջինս Վանի նահանջի վերաբերյալ իր հիշողություններում գրում է. «Հուլիսի 13-ին, թե 14-ին հեռագիրներ ստացա Ալճավազի ու Արճեշի կոմենդանտներից, որ նավեր ճամփեցեք ժողովուրդը Վան տեղափոխելու համար՝ առարկելով, որ զորք չկա: Արճեշի մեր կառավարիչն էլ մի անորոշ հեռագիր էր տվել, թե Մուշից եկած հազարավոր ժողովրդի համար նավեր ուղարկեցեք»[15]: Հուլիսի 14-ին Վանից մեկնեցին Սարգիս Արարատյանը և Կոստի Համբարձումյանը, որոնք ծանոթ էին վերոհիշյալ հեռագրի բովանդակությանը[16]: Ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության հրամանով գաղթում է նաև Մոկսի հայությունը, որի մասին նույնպես հեռագրվում է Արամին[17]: Ռուսական բանակի նահանջի մասին են վկայում Արարատյան գնդի հրամանատար Վարդանի տեղեկությունները, որը հուլիսի 15-ին վերադարձել էր Աղթամարից[18]:

Գրականության և արվեստի թանգարանի արխիվում հայտնաբերված «Վանի դեպքը և կյանքի մասին» վերնագրով Թովմաս Թովմասյանի աշակերտական շարադրությունը ևս վկայում է, որ Արամը, իրոք, տեղյակ էր մոտալուտ դեպքերին: Այդ շարադրության մեջ կարդում ենք. «Ռուս կառավարությունը մեր Արամ փաշային տաս օրից առաջ հայտնեց, թե ով կուզե չմեռնել, թող Վանից դուրս գա և գաղթի դեպի ռուսաց երկրներ..., որովհետև Պոլսից մի բանակ կուգա, որ կլինի քսան կամ քսանհինգ հազար զինվոր, և դեպի Վան կուգան և բոլոր հայ ժողովրդին պիտի կոտորեն: Այդ խոսքը լսելով, մենք էլ իմացանք, թե իրական է: Բայց մեր Արամ փաշան մեզի չհայտնեց, որ մենք էլ առաջուց պատրաստվեինք և այսօր այդչափ կորուստներ չտայինք...»[19]:

Հուլիսի 16-ին կովկասյան 4-րդ կորպուսի շտաբից ստացվում է նահանջի վերաբերյալ հետևյալ տեղեկությունը. «Մեր ատրեադը մեծ չէ, բայց կնահանջե թշնամու ճնշման տակ, այժմ թուրքերը մեր դեմ որևէ բան չեն անում, ցանկալի է, որ ժողովուրդը Նոր Գյուղից արևմուտք գտնվող գյուղերից միայն դատարկվի[20]»: Նույն ամսաթվով ստացվում է նաև Արշակ Կաֆաֆյանի (Քեռու) օգնական Միշա Արզումանյանի նամակը, որտեղ նշվում էր, որ «նահանջը լուրջ է. պետք է աշխատել ժողովուրդը շուտ գաղթեցնել...»[21]: Հուլիսի 16-ին հեռագրեր են ստացվում Արճեշից, որտեղ Անդրանիկը և Գրոն հայտնում էին, որ գաղթածները «ջարգված, փշրված հոս են հասել և հացի ու շորի պետք ունեն»[22]:

---

[15] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 280, թ. 4, 6, Գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) արխիվ, ֆ. 163 – Վ.Տերյան, գ. 145:

[16] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 280, թ. 4:

[17] Վան-Տոսպ, 20. XII. 1915:

[18] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 280, թ. 4:

[19] ՀՀ ԳԱԹ-ի արխիվ, ֆ. 163, Վ.Տերյան, գ. 145:

[20] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 280, թ. 6:

[21] Նույն տեղում:

[22] Նույն տեղում:

Վերոհիշյալ փաստերն ակնառու վկայում են, որ, իրոք, Արամը նախօրոք տեղյակ էր հավանական նահանջի մասին: Սակայն ի՞նչն էր, այնուամենայնիվ, պատճառը, որ Արամ Մանուկյանը միջոցներ ձեռք չառավ գաղթը հաջող կազմակերպելու նպատակով: Հակառակ բազմաթիվ հերյուրանքների, որ Արամը, նախօրոք իմանալով հավանական նահանջի մասին, կազմակերպչական ոչ մի միջոցառում չէր ձեռնարկել, և իբր դրա հետևանքով ծագած աղետալի գաղթի ծանր հետևանքների պատասխանատվությունն ընկնում էր հենց նրա վրա, ենթադրելի է, որ Արամ Մանուկյանը դժվար թե թաքցներ գաղթի մասին գաղտնիքը: Արամ Մանուկյանն իր ժամանակի քաղաքական այն հեռատես և բանիմաց գործիչներից էր, որ զգում էր ցարիզմի հետադիմական զինվորական հրամանատարության քաղաքականությունը: Նա լավ էր հասկանում, թե ինչ նպատակ էր հետապնդում ռուսական բանակի նահանջը, և թե այն ինչ հետևանքներ կունենար արևմտահայերի և մասնավորապես վասպուրականցիների համար: Արամ Մանուկյանը, քաջ գիտակցելով, որ Վանին լուրջ վտանգ չի սպառնում և որ հնարավոր է համատեղ՝ հայ-ռուսական միացյալ զինված ուժերով քաղաքը պաշտպանել, ժողովրդի մեջ խուճապ չառաջացնելու նպատակով ոչ միայն գաղթի նախապատրաստության կոչ չարեց, այլև հայտարարեց, որ Ալջևազի ու Արճեշի գաղթի դեպքերը տեղական, ոչ կարևոր իրադարձություններ են, և որ հարկավոր է անմիջապես վերադառնալ բնակության նախկին վայրերը: Փաստորեն, Արամը, որը կազմակերպված պայքարի կողմնակից էր, գիտակցում էր, որ եթե ժողովուրդը գաղթեր և միանար ռուսական նահանջող բանակին, ապա այլևս հնարավորություն չէր ունենա հետ վերադառնալու իր հայրենիքը, քանի որ դրանով ցարիզմը կիրականացներ իր վաղեմի երազանքը և Արևմտյան Հայաստանը կբնակեցներ կազակներով: Այդ էր պատճառը, որ նահանգապետ Արամ Մանուկյանը, նախապես իմանալով ռուսական բանակի նահանջի մասին, նախնական միջոցառումներ չձեռնարկեց հավանական գաղթը կազմակերպելու ուղղությամբ, նա հույս ուներ անհրաժեշտության դեպքում, Վանի ապրիլյան հերոսամարտի օրինակով և զինված պայքարի միջոցով քաղաքը փրկել կործանումից: Սակայն, դժբախտաբար, իրադարձությունները հետագայում զարգացան այլ կերպ:

Սկզբում ժողովի մասնակիցների ընդհանուր տրամադրությունն այն էր, որ ամբողջ բնակչությունը չգաղթի և կազմակերպված դիմակայի թուրքական հարձակմանը: Սակայն, երբ հայտնի դարձավ գեներալ Նիկոլաևի՝ Վանից մեկնելու ցանկությունը, ինչպես նաև այն, որ ռուսական հրամանատարությունը հրաժարվում էր անհրաժեշտ քանակության զենք տրամադրել և համապատասխան տեղեկություններ հաղորդել քաղաքը պաշտպանելու վերաբերյալ, ժողովականները, այդ թվում նաև Արամը, փոխեցին իրենց մտադրությունը և հանդես եկան ամբողջ ժողովրդին գաղթեցնելու առաջարկությամբ[23]: Ժողովն ընդունեց հետևյալ որոշումները. 1. Հատուկ պատգամավորներ ուղարկել կաթողիկոսի մոտ, որպեսզի վերջինս աղերսի ցարին, որ, եթե հնարավոր է, դադարեցվի Վանի նահանջը, և խնայվի հայության գոնե այդ բեկորը: Ժողովի ընդունած որոշման այս կետը գալիս է ապացուցելու մեր ենթադրությունը, թե Արամ Մանուկյանը, հավանաբար նաև այլք, նախօրոք իմացել էին կովկասյան ճակատում ռուսական բանակի նահանջի՝ հեռուն գնացող նպատակները: Հակառակ դեպքում, ժողովի մասնակիցները նման

[23] Նույն տեղում, թ. 8:

որոշում ընդունել չէին կարող: Նշանակում է՝ Արամ Մանուկյանը ճիշտ էր վարվել ժողովրդի մեջ հավանական գաղթի խուճապ չառաջացնելու առումով, երբ իմանալով ժողովրդին գաղթեցնելու կարգադրությունը, նախօրոք գաղթի կազմակերպման պատրաստություն չէր տեսել: 2. Համայնացնելով գավառի փոխադրության միջոցները՝ զինված խմբերի պաշտպանության տակ գաղթեցնել միայն երեխաներին, կանանց, հիվանդներին, ծերերին ու անկարողներին, իսկ բոլոր չափահաս տղամարդկանց (18 - 45 տարեկան) զինելով՝ կազմել ինքնապաշտպանական բանակ, որը հայ կամավորների հետ կմնար Վանում:

Թեև ռուսական զինվորական հրամանատարությունը մերժել էր կամավորներին Վանում թողնելու խնդրանքը, բայց Ա.Եկարյանը, դիմելով Արարատյան գնդի հրամանատար Վարդան Մեհրաբյանին, պահանջում էր, որ նա կամավորական գնդերը չհեռացնի գրավված շրջաններից[24]:

«Գաղթի հրամանը, - նշում է «Հորիզոնը», - բոլորի համար անսպասելի էր: Մանազկերտի մեր դժվարությունները և թուրքերի առաջխաղացումը տակտիկական մի խաղ համարվեց, և ոչ ոք չէր ուզում հավատալ, որ այդ բոլորի ետևը լուրջ բաներ կան: Ամենքը կարծում էին, թե մեր զորքի հետ շարժվելը այնքան մեծ չպիտի լինի, որ գաղթի մասին խոսք բացվի: Շատ-շատ, մտածում էին, կհեռացվեն կանայք ու երեխաները, և զենք կրելու ընդունակ տղամարդիկ, կամավորների ու զորքի հետ, կմնան երկիրը պաշտպանելու համար: Վասպուրականի կառավարությունը ստիպված պայմաններում ուրիշ ոչ մի միջոց չուներ ժողովրդին փրկելու, բացի գաղթելուց»[25]:

Գաղթի կազմակերպման գործը ղեկավարելու համար, նահանգապետի կարգադրությամբ, ժողովրդի վստահությունը վայելող տեղացիներից ընտրվեց փոխադրության լիազոր հանձնաժողով[26]: Այն պատրաստվում էր հրահանգ ուղարկել գավառային բոլոր հրահանգիչներին, որպեսզի ձեռնարկեին փոխադրության միջոցները համաձայնեցնելու և կենտրոնացնելու ստիպողական գործը, երբ հուլիսի 18-ի երեկոյան հայտնի դարձավ կովկասյան ճակատի ռուսական բանակի հրամանատարի հրամանն այն մասին, որ, եթե 3 օրվա ընթացքում գաղթականները Բերկրիի սահմանը չանցնեն, հնարավոր է, որ նահանջի գիծը փակվի[27]: Սա ոչ այլ ինչ էր, եթե ոչ ժողովրդի մեջ դիտավորյալ խառնաշփոթ առաջացնելու միտում, երկյուղ գցելու ցանկություն, որպեսզի նա գաղթեր՝ որքան հնարավոր է չուտ:

Հրամանը վան-վասպուրականցիներին ստիպում է բռնել արտագաղթի ճանապարհը: Հուլիսի 18-ի գիշերը սկսվում է Վասպուրականի ժողովրդի խուճապահար գաղթը: Շուտափույթ գաղթի տագնապալի լուրը չէր կարող խուճապ չառաջացնել ժողովրդի մեջ: «Այդ ժամերի հոգեբանությունը, - նշում էր Վանի նահանգապետը, - այս էր, անհայտացում համայնական, կառավարական, կուսակցական, ընկերական, նույնիսկ սեփականատիրական զգացմունքների»[28]: «Մարդիկ, - գրում էր «Հովիտ»-ը, - սկսեցին պատրաստվել ճանապարհ ընկնել, ուր, ինչի համար՝ չգիտեն, ինչ կսպասի իրենց, տեղ կհասնեն,

---

[24] Հուշեր Արմենակ Եկարյանի, էջ 245 - 246:
[25] Հորիզոն, 14. VIII. 1915:
[26] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 280, թ. 8, Վան-Տոսպ, 20. XII. 1915:
[27] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 280, թ. 9, Ազգ, 8. X. 1915:
[28] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 280, թ. 9:

թե ոչ... Ապշեցուցիչ սառնասրտությամբ ու լռությամբ ամեն մարդ իր գործին է և այնպես է հաշտվել իր սիրելի վաթանը թողնելու հետ, կարծես միայն մի ժամվա զբոսանքի է ելնում՝ նորից վերադառնալու...»[29]:

Խոսելով խուճապահար գաղթի մասին՝ ժամանակակիցները նշում էին, որ «Ինքնապաշտպանության օրերուն այնքան կարգապահությունով և վճռականությունով կռվող վասպուրականցին չկար այլևս, այլ սարսափահար մարդոց բազմություն մը, այլամերժ և եսասեր, ամեն մեկը կմտածեր իր կաշվին փրկության մասին, ամենափոքր կարեկցություն չէր զղար իր դրացիին մասին»[30]: Կամ՝ «...մերն զմանուկ ուրացավ և ամեն մարդ անմիջապես տունը ձգեց ու փախչել սկսավ...»[31]:

«Գաղթը տանելի է, - գում է Ա.-Դոն, - երբ ժողովուրդը ծախում է իր գույքը, վերցնում է անհրաժեշտ իրերը, ձեռք է բերում փոխադրության միջոց ու ճանապարհ ընկնում դեպի մի նոր երկիր. սա այդպիսի գաղթ չէր, այլ փախուստ, խուճապ, շփոթ»[32]:

Անկազմակերպ գաղթին որոշ չափով կազմակերպված ընույթ հաղորդելու նպատակով ընտրվում են զինվորական, առողջապահական, սննդի և այլ կարգի հանձնաժողովներ: Զինվորական՝ կարգադրիչ ու հանձնաժողովի ղեկավարի պարտականությունները ստանձնում է Արմենակ Եկարյանը[33]:

Թուրքերի ձեռքը չթողնելու նպատակով հուլիսի 18-ի երեկոյան հրդեհվում են Վանի մոտ 300 լավագույն տները, ինչպես նաև բազմաթիվ չինություններ ու խանութներ[34]:

Տիրող խառնաշփոթ իրավիճակի պայմաններում քաղաքում շարունակվում էր առևտուրը, չնայած իրավիճակի կտրուկ փոփոխման հետ միասին խիստ ընկել էին ապրանքների գները: Հուլիսի 19-ի կեսօրին փակվում են նաև խանութները, իրենց աշխատանքն են դադարեցնում նահանգային վարչության բոլոր մարմինները: Թեպետ դրանով քաղաքը ենթարկվում էր անիշխանական վիճակի, սակայն ի հայտ չի գալիս անկարգության և գողության ոչ մի դրսևորում:

Հուլիսի 19-ին Վանից մեկնում է գեներալ Նիկոլաևը: Քաղաքում մնացած զինվորները (կազակները) և սահմանապահ գնդի միավորումները (բաղկացած՝ հիմնականում վրացիներից) կազմակերպում են քաղաքի առևտրական կենտրոնների և խանութների կողոպուտ: Նահանգապետի կողմից թալանը կասեցնելու բոլոր փորձերը պսակվում են անհաջողությամբ[35]:

Խոսելով Վանից գեներալ Նիկոլաևի հեռանալու մասին՝ Կովկասյան բանակի կազմավորումներից մեկի հրամանատար Թ.Նազարբեկովը մատնանշում է. «Ոչ մի կերպ ես չեմ կարողանում հանգստանալ գեներալ Նիկոլաևի աննպատակ և արագ նահանջից...»[36]:

Ինչպես Հ.Թումանյանն է նշում, «Զորքերը դարձյալ առաջվա նման

---

[29] Հովիտ, 23. VIII. 1915:

[30] Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, Հ. Ա, Կ.Պոլիս, 1919, էջ 61-62:

[31] Ազդ, 8. XI. 1915:

[32] Ա.-Դ ո , Մեծ դեպքերը Վասպուրականում 1914 - 1915թթ., Ե., 1917, էջ 474:

[33] Վան-Տոսպ, 3. I. 1916:

[34] Հ.Թումանյանի տուն-թանգարանի արխիվ, Թղթապանակ 51, Ճամփորդական օրագիր, էջ 12:

[35] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 280, թ. 11:

[36] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 45, ց. 1, գ. 22, թ. 43:

զբաղված են կողոպուտով՝ զարհուրելի չափով: Օֆիցերներ կան, որ ասում են՝ «ուղղակի ամաչում ենք»: Տեղական ամբողջ ազգաբնակչությունը կարոտով է հիշում 1877 – 1878-ի պատերազմի զորքն ու գեներալներին: Մի անգամ մի կազակ մի քուրդ, թե թուրք կնոջից բան էր խլել՝ Տեր-Ղուկասովը կախաղան հանեց, իսկ հիմա, փախուստի ժամանակ մի կազակ չկար, որ թարքին խալի չուներ կապած»[37]:

Ժողովուրդը բռնեց գաղթի ճանապարհը: Վանի մոտակա և Վանից դեպի հյուսիս ընկած գավառները շարժվեցին վաղօրոք: Վան, Ավանց, Սև-գետ, Գե-լու, Ջանիկ, Փանդ, Բերկրի, Բայազետ-աղա, Սոուղ-սու, Կետվրեշամե, Թափարիզի լեռնանցք, Կարաքենդ-Կըզըլ-դիզե, Կարաբուլախ, Ջնգլի լեռնանցք, Օրդովի կիրճ, Իգդիր: Ահա մոտ 200 վերստ երկարությամբ այն գիծը, որով շարժվում էր խուճապի մատնված գաղթականությունը: «Հովիտ» թերթի վկայությամբ, ճամփան լիքն է. մերկ, բոկոտն, ցնցոտիներով մայրերը՝ երեխաներին շալակած... ոտքով քայլում են անձայն կամ կենդանիների հետ խոսելով... գաղթականությանը ոչ սկիզբ կա, ոչ վերջ», – նշում է ժամանակի մամուլը[38]: «Դա ահավոր ու կսկծալի մի գաղթ էր, – գրում է դեպքերի ականատես, պատմաբան Համո Հարությունյանը: Վան-Վասպուրականից մինչև Իգդիր գտնվող ճանապարհը ծածկված էր խուճապահար ժողովրդով, իրար էին խառնվել կին ու երեխա, մարդ ու անասուն, կենդանիներ, կառքեր, սայլեր... Ճանապարհի չորս կողմը լաց ու կոծ, աղմուկ, աղաղակ, սրտաճմլիկ տեսարաններ, որոնք հնարավոր չէ նկարագրել»[39]: Վանից մինչև Խոյ և Իգդիր ընկած ճանապարհի երկայնքով սփռված էին հայ գաղթականների դիակներ: Կրծքի երեխաներն, առանց բացառության, մահացան[40]: Շատերը, սովից, ծարավից, և բնակլիմայական անբարենպաստ պայմաններից հյուծվելով, տապալվում էին գետնին:

Առհասարակ անմխիթար էր փոխադրության միջոցների վիճակը՝ նախ, այն պատճառով, որ թուրքական կառավարությունը 1914թ. աշնանը հավաքել էր հայերին պատկանող բոլոր սայլերն ու ձիերը, և երկրորդ՝ Վանի ապրիլյան կռիվների ժամանակ հայերի մոտ մնացած ամբողջ շարժական գույքն ընկել էր քրդերի ձեռքը: Ընդհանրապես, գաղթի ժամանակ ավելի շատ տուժեց ոչ թե գյուղական վայրերի, այլ Վան քաղաքի ազգաբնակչությունը: «Ժողովուրդը շարժվում էր շատ դանդաղ, հուսահատ, ինչպես մահվան թափոր, – վկայում է Հ.Հարությունյանը, – փոխադրության միջոցները քիչ էին, մանավանդ, քաղաքի բնակչության մեծ մասը զուրկ էր փոխադրության տարրական միջոցներից, շատ-շատերը շալակած ուտելիք ու երեխաներ, քայլում էին...»[41]: «Ժողովրդի բացարձակ մեծամասնության փոխադրության միջոցը եզներն էին, – գրում էր ժամանակակիցներից մեկը, – որոնք, բեռ կրելու անվարժ, անտանելի տանջանքների կենթարկեին մեզ»[42]: Նահանջող բազմությանն ընկերակցում և օգնում էին 5000

---

[37] Հ.Թումանյանի տուն-թանգարանի արխիվ, թղթապանակ 51, Ճամփորդական օրագիր, էջ 2, 13:

[38] Հովիտ, 30. VIII. 1915:

[39] Հ. Հարությունյան, Վասպուրականի 4000-ամյա համառոտ պատմություն, Երկրորդ մաս (1908 – 1918), տետր, 4, էջ 752 (պրոֆ. Համո Հարությունյանի անձնական արխիվ):

[40] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 476:

[41] Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 752:

[42] Ազդ, 8. X. 1915:

կամավորներ և 3000 զինված երիտասարդներ[43]: Պետք է նշել հատկապես գեներալ Տրուխինի կազակների մարդասիրությունը, որոնք սեփական նախաձեռնությամբ փրկում էին հայերին[44]:

Այն բանից հետո, երբ ռուսական զորամասերն արդեն հեռացել էին Վանից, իսկ գաղթող բնակչությունը 1-ին և 2-րդ կամավորական խմբերի ուղեկցությամբ հասել էր Բերկրի, գեներալ Տրուխինը կամավորական խմբերին բանավոր հայտնում է, որ կարող են մնալ Վանում: Սակայն արդեն շատ ուշ էր, որովհետև մնալով անպաշտպան վիճակում նրանք կարող էին ոչնչանալ[45]:

Գաղթող բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով, հուլիսի 20-ին Անդրանիկը դիմում է գեներալ Շերպանտևին՝ խնդրելով, որ վերջինս թույլատրի որոշ քանակությամբ զորք թողնել Բերկրիում: Սակայն, մերժում է ստանում[46]: Անդրանիկը նույն հարցով հուլիսի 21-ին դիմում է նաև գեներալ Նիկոլաևին, սակայն՝ կրկին մերժում: Խորհրդակցելով իր օգնականների հետ՝ Անդրանիկը որոշում է կամավորներից բաղկացած հատուկ խմբերի օգնությամբ գաղթող ժողովրդին պաշտպանել թուրքերից: Ինքը՝ Անդրանիկը, ստացված հրամանի համաձայն, հուլիսի 22-ին շարժվում է դեպի Աբաղայի դաշտը, իսկ գաղթականները նրա ստեղծած զինված պահակախմբերի օգնությամբ հուլիսի 23-ին հասնում են Թավրիզ, 24-ին՝ Կըզըլ-դիզե, 25-ին՝ Օրգով, իսկ 26-ին՝ Իգդիր, որտեղից էլ ուղեկցող զինվորները վերադառնում են Անդրանիկի գունդը[47]:

Հուլիսի 24-ին թուրքական զորքերը շարժվեցին դեպի Բերկրի: Ոգևորվելով դրանից՝ Զիլանի քրդերը շրջապատում են Բերկրիի ձորը (հատկապես Տենաղրումի կոչված կիրճը) և մի քանի անդամ հարձակվում գաղթականների վրա: Ամենամեծ հարձակումը կազմակերպվեց հուլիսի 25-ին, երբ ռուսական զորամիավորումները և Դրոյի կամավորները «դեռ շարունակվող գաղթականական հոսանքի ներկայությամբ նահանջեցին Աբազա»[48]: Քրդերը գրավում են Բանդիմահի գետի քարե կամուրջը և փակում ժողովրդի առաջխաղացման ճանապարհը: Գաղթականությունը, որի մի ծայրը դեռ Վանում էր, հետ փախավ դեպի Ջանիկ: Սոսկալի ջարդի հետևանքով զոհվեցին 10.000-ից ավելի գաղթականներ[49]: Բերկրիի գիծը փակվեց, որի հետևանքով գաղթականների մի մասը, հիմնականում՝ շատախցիներ և ալաշկերտցիներ, բռնեց Պարսկաստանի ճանապարհը: Ռուսական զորքերի նահանջը ոգևորեց քրդերին, որոնք հարձակում կազմակերպեցին նաև Սարայի շրջակայքում և պատճառ դարձան շուրջ 6000 գաղթականների կոտորածի[50]:

Խոսելով 1915թ. հուլիսյան գաղթի մասին՝ 4-րդ Պետական դումայի անդամ Մ.Պապաջանյանը նշում է, որ համաձայն Արևմտյան ռազմաճակատում

---

[43] Կ.Սասունի, նշվ. աշխ., էջ 82, Լ.Զորմիսյան, նշվ. աշխ., էջ 264, Հ.Թումանյանի տուն-թանգարանի արխիվ, թղթապանակ 51, Ճամփորդական օրագիր, էջ 7:

[44] Центральный государственный военно-исторический архив Российской Федерации, ф. 2100, оп. 1, д. 646, л. 82.

[45] Մ.Պ.Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե., 1976, էջ 426:

[46] Հայաստան, 15. VI. 1917:

[47] Մ.Պ.Աղայան, նշվ. աշխ., էջ 419:

[48] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 480:

[49] Նույն տեղում:

[50] Նույն տեղում:

հաստատված օրենքի, առողջ բանականության պահանջի և քաղաքական հաշվեկշռի, բնակչությունը նախօրոք պետք է տեղեկացվեր բանակի նահանջի մասին: Դրա հետևանքով, այդ նահանջը հայ ժողովրդին պատճառեց 40.000 զոհ: Միևնույն ժամանակ, նա հայտնում էր, որ իշխանությունները համապատասխան միջոցներ ձեռք չէին առել, որպեսզի գաղթականների տեղափոխումն իրականացվեր առանց զոհերի: Գաղթականներին անփութորեն մատնանշվում էին այնպիսի ուղիներ, որոնք կարող էին հասցնել տեղական ազգաբնակչության վերացմանը: Հայերին ոչ մի օգնություն և պաշտպանություն ցույց չէր տրվում: Դա քրդական ցեղերին ու չերքեզներին թույլ էր տալիս շարունակել իրենց անպատիժ չարագործությունները: Հայերին կոտորած քրդական հրոսակախմբերի ղեկավարները ոչ միայն չէին պատժվում, այլև հովանավորվում էին: Նրանց զինաթափումը ցարական իշխանությունների կողմից կատարվում էր այնպես, որ շարունակեին ազատ ապրել իրենց նախկին վայրերում[51]:

«Շնորհիվ իշխանությունների անհոգ վերաբերմունքի, - նշվում է արխիվային փաստաթղթերից մեկում, - փախստականների դրությունը նահանջի ժամանակ չափազանց վատ էր: Այն ժամանակ, երբ Արևմտյան ռազմաճակատում տեղական ժողովուրդը ստիպողական կարգով էր տեղահան արվում դեպի Ռուսաստանի խորքերը, Կովկասյան ռազմաճակատում, ուր ամեն մի զինվորի էլ հայտնի էր, որ նահանջի դեպքում ազգաբնակչությունն իր՝ դեպի Ռուսաստանը տածած համակրանքի պատճառով թուրքերի և քրդերի կողմից ենթարկվելու էր ընդհանուր սրախողխողման, ոչ միայն ստիպողական ճանապարհով տեղահան չարվեց, այլև բոլոր նախորդ նահանջների նման էլ ամենախիստ կերպով ծածուկ էր պահվում ազգաբնակչությունից, որի հետևանքով ամբողջովին սրախողխող եղավ նահանջի ճանապարհից դուրս գտնված Ջեյդկանի, Մոլա Սուլեյմանի, Խաստուրի և այլ գյուղերի ժողովուրդը: Նույնը կրկնվեց և Բասենում՝ հուլիսյան նահանջի ժամանակ: Ինչպիսի հայատյաց քաղաքականություն այն ժողովրդի նկատմամբ, որը ապստամբության դրոշ էր պարզել թշնամու դեմ և ցնծագին դիմավորել ռուսական զորքերին»[52]:

Նույնիսկ «Республика» պարբերականն էր խոստովանում, որ «նահանջը (խոսքը 1915թ. հուլիսյան նահանջի մասին է - Ավ. Հարությունյան) իրականացվում էր մեծ աճապարանքով՝ չհամապատասխանելով ռազմական գործողությունների իրավիճակին... Գործը հասնում էր այնտեղ, որ կանանց և երեխաների երկար շարանը մնում էր նահանջող բանակի թիկունքում՝ բոլոր կողմերից ոտքի կանգնած քրդերի հարվածների տակ: Մարդկային զանգվածները մահանում էին՝ լքված, բախտի քմահաճույքին»[53]: «Ռուս բանակը ոչ իսկ կմտածեր գաղթող ժողովրդի ապահովության մասին, - նշվում է մի փաստաթղթում: Միայն տեղ-տեղ կամավորներ և խիզախ զինվորներ կօգնեին անոնց, թեև հաճախ իրենք կթալանեին թշվառներին ունեցած մի քանի կտոր իրեղենները»[54]:

Լեոն, անդրադառնալով այս դեպքերին, նկատում է. «Այժմ 1877թ. չէր,

---

[51] Архив Внешней политики Российской Империи, ф. 151, Политархив, 1916, оп. 482, д. 3487, л. 11, Армяне и война, Одесса, 1916, апрель, май, № 2-3, Գործ, 1917, № 7-8, էջ 155:

[52] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, ց. 1, գ. 132, թ. 35-36:

[53] Республика, 26. VII. 1917:

[54] Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, հ. Ա, էջ 62:

երբ գեներալ Տեր-Ղուկասովն իր հռչակավոր նահանջի ճանապարհին, թշնամուց շրջապատված երեք կողմից, առաջ փախստական ալաշկերտցու սայլն էր ճանապարհ դնում, հետո ինքն էր ճանապարհ ընկնում: Այժմ Ցուղենիչի բանակն էր, որին հալածող թշնամի չկար, բայց որ աճապարում էր, առանց որևէ ուշադրություն դարձնելու խելակորույս փախչող բազմության վրա, որին նա թողնում է իր հետևում և ինքն առաջ անցնում...»[55]:

Վանի նահանգի հայության գաղթը տևեց 34 օր, իսկ քաղաքինը՝ հուլիսի 18 - 24-ը: Այն նյութական, բարոյական և մարդկային մեծ վնասներ պատճառեց վասպուրականցիներին:

Հուլիսյան այդ դժնդակ օրերին գաղթեց շուրջ 281888 մարդ (ըստ Հանրի Բարբիի տվյալների՝ 207473 հոգի)[56], որոնցից 15518-ը՝ Բասենից, 6050-ը՝ Աբաղայից և Աղբակից, 180.000-ը՝ Վանից, Բիթլիսից, Մուշից, Մանազկերտից, Պատնոսից, Այնթապից և Ալաշկերտից, 17320-ը՝ Օլթիից, Արդահանից և Արդանուշից, 63000-ը՝ Պարսկաստանից: Տարբեր հիվանդություններից, ցրտից և կյանքի անբարենպաստ պայմաններից ճանապարհին մահացան շուրջ 8000 հոգի: Կային ընտանիքներ, որոնք կորցրել էին իրենց կազմի 70 - 80-ը[57]: Գաղթեցին 3 ուղղություններով. Կարսի վրայով անցան Սարիղամիշի, Թուրքական Բասենի, Կարինի, Բիթլիսի, Խնուսի՝ 18091, Իգդիրի վրայով՝ Բիթլիսի, Վանի, Մուշի, Մանազկերտի, Պատնոսի, Այնթապի, Աբաղայի, Ալաշկերտի շրջանների՝ 170000 և Ջուլֆայի գծով՝ Աղբակի և Պարսկաստանի 18055 գաղթականներ: Գաղթեցին նաև ռուսական տիրապետության տակ գտնվող Օլթիի, Արդանուշի, Արդվինի և Արդահանի բնակիչները, թվով՝ 7320 հոգի: Կային նաև տարբեր վայրերում հանգրվանած 1327 գաղթականներ: Գաղթականների 55 %-ը իգական սեռի ներկայացուցիչներ էին, 30 %-ը՝ երեխաներ (3/4-ը՝ աղջիկներ), 10 %-ը՝ արական սեռի, իսկ 5 %-ը՝ ծերեր[58]:

Սակայն Վասպուրականի նահանգի հեռավոր շրջանների շուրջ 2000 հայերի չհաջողվեց փախչել, և նրանք ստիպված եղան թաքնվելու Շատախի, Մոկսի և Խիզանի անմատչելի լեռներում, ձորերում և անտառներում[59]: Վիճակագրական տվյալների համաձայն, Վանի հայերին պատկանող շուրջ 600 այրված տների և խանութների նյութական վնասը կազմեց 30 մլն ռ., իսկ ամբողջ նահանգինը՝ 60 - 70 մլն ռ.: Ընդ որում, միայն անասունների կորուստը կազմում էր 30 մլն ռ., իսկ գյուղատնտեսական ունեցվածքինը՝ 12 մլն ռ. (գաղթականները մինչև գաղթելն ունեցել էին 38659 գլուխ լծկան և 27940 գլուխ կաթնատու անասուններ, 3941 ձի և ավանակ, 140625 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 2590494 փութ

---

[55] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ, Փարիզ, 1935, էջ 179:

[56] Հանրի Բարբի, Սարսափի երկրին մեջ: Նահատակ Հայաստան, Կ.Պոլիս, 1919, էջ 110:

[57] Центральный государственный исторический архив республики Грузии (ЦГИА Р.Груз.), ф. 520, оп. 1, д. 40, л. 54, д. 204, л. 5. Տե՛ս նաև ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 128, թ. 21, նաև գ. 378, թ. 59, С.Асланянц, Среди беженцев (личные впечатления), Астрахань, 1915, с. 18.

[58] Հանրի Բարբի, նշվ. աշխ., էջ 110, Կ.Սասունի, նշվ. աշխ., էջ 324, Համբավաբեր, 3.I. 1916:

[59] ЦГИА Р.Груз., ф. 520, оп. 1, д. 40, л. 54.

ցորեն, գարի և այլուր, 7905 սայլ, 2885450 փութ խոտ, 369880 հա ցանքս, իսկ իրենց հետ տարել էին 1020 գլուխ լծկան, 670 գլուխ կաթնատու անասուններ, 310 ձի և ավանակ, 2150 մանր անասուններ և 310 սայլ[60]: Այս աղետը և մնասները շատ ավելի ծանր էին այն կորուստներից, որ Վան-Վասպուրականի ժողովուրդը կրել էր հայրենի օջախում՝ մոտ մեկ տարվա ընթացքում:

Կարծում ենք՝ Վանը թշնամու ձեռքը չպիտի ընկներ և, հետևաբար, չպիտի ենթարկվեր անփոխարինելի կորուստների, եթե հուլիսի 14-ի և 17-ի ժողովների վերոհիշյալ որոշումների համաձայն, զենքի ընդունակ տղամարդիկ մնային քաղաքում և զինված դիմադրեին թուրքական հավանական հարձակմանը: Վանն այդ ժամանակ ավելի էր պատրաստ դիմադրության, քան ապրիլյան կռիվների ժամանակ: Այն կարող էր 2-3 անգամ ավելի շատ ուժ հանել, քան առաջ[61]: Պաշտոնական տվյալներով՝ վասպուրականցիներն ունեին առնվազն 8 հազար միավոր զենք, որից 3000-ը պատկանում էր կամավորներին, 3000-ը բռնագրավել էին թուրքերից, իսկ 2000-ն էլ վանեցիների սեփականությունն էր: Կամավորական ջոկատների հրամանատար Վարդանը խոստովանում էր, որ իրենք կարող էին Վանում մնալ և քաղաքը պաշտպանել, եթե այդպես որոշվեր: Իսկ Վանի երիտասարդությունն առհասարակ դեմ էր քաղաքը լքելու գաղափարին: Բանն այն էր, որ Վանա լճի հարավային կողմերում գտնվող թուրքական բանակն անհամեմատ փոքր ուժ էր՝ քաղաքի վրա լուրջ հարձակում կազմակերպելու առումով: Իսկ հյուսիսային շրջաններում տեղաբաշխված ուժեղ բանակը, Վանի վրա հարձակվելու դեպքում, իր թիկունքը չպիտի դարձներ ռուսական բանակին: Առաջին պարագայի համաձայն, ժողովի ընդունած որոշման դեպքում, զինված դիմադրությունն ամեն բան պիտի փրկեր: Իսկ երկրորդ դեպքում, ինքնապաշտպանական ուժերը նահանջի ապահով գիծ կունենային Սարայի ուղղությամբ: Այս երկու հավանականություններից տեղի ունեցավ առաջինը, երբ հուլիսի 28-ին ռուսական զորքերի կողմից Վանը թողնելուց հետո, Ջևդեթ բեյն իր 400 չեթեներով մտավ Վան և «փորձեց վերականգնել վարչական իշխանությունը»[62]: Սակայն քաղաքում մի քանի օր մնալուց, մնացած 400 հայերին բարբարոսությունների ենթարկելուց, Վռամյանի կառուցած «Աշխատանքի տունը» («Ժողովրդական տուն»), Նորաշենի եկեղեցին, Արամի, Իշխանի, Բուլղարացի Գրիգորի և այլոց մոտ 50 տներն այրելուց ու մեծահարուստների տները թալանելուց հետո, ռուսական թնդանոթների ձայներն առնելուն պես փախավ[63]: Ոճրագործ Ջևդեթ բեյի չեթեների քանակական սակավությունն ինքնին գալիս է մերժելու ռուսական բանակի նահանջի վերաբերյալ ցարական զինվորական հրամանատարության վերոհիշյալ «արդարացնող» փաստարկումները: Չէ որ նման դեպքում Ջևդեթ բեյը Վան կներխուժեր ոչ թե 400, այլ միգուցե 4000 չեթեներով:

Գեներալ Ջեռնոգուբովը 1915թ. հուլիսի 24-ով թվագրված իր հեռագրում նշում էր, որ ռուսական զորքերի նոր հակահարձակման հետևանքով հարկավոր է կասեցնել գաղթականների հետագա առաջխաղացումը: Եվ դա, իրոք, այդպես էր, քանի որ Վանը թողնելուց մի քանի օր հետո՝ օգոստոսի 2-ին, ռուսական մեկ

---

[60] Նույն տեղում: Տե՛ս նաև Համբավաբեր, 3. I. 1916:
[61] Ա. - Դ ո , նշվ. աշխ., էջ 469:
[62] Кавказское слово, 2. IX. 1916:
[63] Ազգ, 5. I. 1916:

այլ զորամաս, Սալմաստ-Բաշկալե-Խոշաբ գծով, կրկին մտավ քաղաք, սակայն այս անգամ առանց հայերի: Այս իրադարձությունները մեկ անգամ ևս վկայում են, որ ռուսական զորքերի նահանջը, հավանաբար միտումնավոր էր: Այսպիսով, ինքնապաշտպանություն կազմակերպելու դեպքում Վանը կմնար կանգուն:

Ռուսական բանակի նահանջը կոտրեց Վասպուրականի ժողովրդի մարտական ամրակուռ կամքը, նրա ապստամբ ոգին: Այն ոչ միայն նյութական հսկայական կորուստներ պատճառեց, այլև հոգեկան ու բարոյական ծանր հարվածներ հասցրեց անպաշտպան բնակչությանը: Դա ճակատագրական դժբախտություն էր հայ ժողովրդի համար:

МИГРАЦИЯ НАСЕЛЕНИЯ ВАН-ВАСПУРАКАНА В ИЮЛЕ 1915Г.

А.А.АРУТЮНЯН

Резюме

В начале 1915г. военные действия на Кавказском фронте проходили уже на территории Западной Армении. Русская армия в феврале-мае 1915г. захватила Маназкерт, Башкале, Шатах, Котур, Арчеш и Ван. Однако в результате резкого изменения военной ситуации Кавказская армия летом 1915 года отступила к Алашкертской долине, вследствие чего началась миграция населения Ван-Васпуракана. Мигрировало 2718888 армян.